

7.4 Դ /4272/05/10

Վարչակազանի գործառնական մշտադիտարկված գործերի  
քննությունը  
ձգձգելու օբյեկտիվ պատճառները

Դատական նիստերի հետաձգումներն պայմանավորված նշված հիմքերով՝  
Դատավարության մասնակիցներին հնարավորություն է  
ընձեռնվել ծանոթանալ գործին յուրեք օր, ունենալ փաստաթղթեր  
գործով, ներկայացնել պատասխանառարկություն մյուս  
դատավարության մասնակիցներին կողմից ներկայացված  
դիրքորոշման վերաբերյալ, պատշաճ ծանուցումը ապահովելու  
համար, դրանք օբյեկտիվ պատճառներ են:

Վարչակազանի գործառնական մշտադիտարկված գործերի  
քննությունը  
ձգձգելու սյուբյեկտիվ պատճառները

Սույն գործով հայցը վարույթ է ընդունվել 25.11.2010թ-ին, մինչդեռ  
առաջին նախնական դատական նիստը հրավիրվել է 6 ամիս անց՝  
27.05.2011թ-ին, այն արդեն իսկ ողջամիտ ժամկետների խախտում է, քանի  
որ տվյալ պահին գործող օրենքի համաձայն<sup>1</sup> հայցը վարույթ  
ընդունելու որոշում կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում,  
վարչակազանի գործարանն պետք է այդ որոշումը, հայցադիմումի կից  
փաստաթղթերի պատճենները ուղարկի դատավարության  
մասնակիցներին:

Կրկին տվյալ պահին գործող նույն օրենքի համաձայն<sup>2</sup>  
միաժամանակ երկշաբաթյա ժամկետ է տրվում Պատասխանողին  
վարչակազանի գործարանն ուղարկել հայցադիմումի պատասխանը, որի  
ստանալուց հետո դատարանը գործող օրենքի համաձայն<sup>3</sup> կարող է  
հրավիրել նախնական դատական նիստ, հետևաբար այս դատավարական  
համալիր գործողություններն են ներկայացնելու 6 ամիս անց առաջին  
նախնական դատական նիստի նշանակումը սուբյեկտիվ  
պատճառներով է պայմանավորված և այն չի կարող համարվել  
ողջամիտ ժամկետի պահպանմամբ քննության իրականացում:

Տվյալ գործով առարկան ժառանգության է վերաբերվել, իսկ  
պատասխանող է հանդիսացել նոտար Էմմա Շաբոյանը: Առաջին

<sup>1</sup> ՀՕ-269-Ն օրենք, 28.11.2007թ խմբագրություն ամբՀՀ վարչակազանի  
դատավարության օրենսգրքի 77-րդ հոդված կետ 5  
<sup>2</sup> ՀՕ-269-Ն ՀՀ օրենք, 28.11.2007թ խմբագրություն ամբՀՀ վարչակազանի  
դատավարության օրենսգրքի 83-րդ հոդված կետ 1  
<sup>3</sup> ՀՕ-269-Ն ՀՀ օրենք, 28.11.2007թ խմբագրություն ամբՀՀ վարչակազանի  
դատավարության օրենսգրքի 86-րդ հոդված կետ 1

ն ախն ա կ ա ն դ ա տ ա կ ա ն ն ի ս տ ի ց հ ե տ ո շ ա ր ու ն ա կ վ ե լ ե ն դ ա տ ա կ ա ն ն ի ս տ ե ր հ ր ա վ ի ր վ ե լ ` 27.05.2011թ .-ի ն , 15.12.2011թ .-ի ն , 13.03.2012թ .-ի ն , 29.05.2012թ .-ի ն , 19.07.2012թ .-ի ն , 15.10.2012թ .-ի ն , 11.12.2012թ .-ի ն , 27.02.2013թ .-ի ն , 07.05.2013թ .-ի ն , 01.08.2013թ .-ի ն , 28.11.2013թ .-ի ն , 21.01.2014թ .-ի ն , 09.04.2014թ .-ի ն , ա յ ն ու հ ե տ ն

1. ՀՀ Արդարադատության նախարարը 29.04.2014թ. հրամանով ազատում է գործով պատասխանող նոտար Էմմա Շաբոյանին նոտարի պարտականություններից:

Գործի քննությունը 2010թ-ից մինչև 2014 ապրիլը դատավարության կարգավիճակ ունեցող նոտարը ազատված չի եղել պաշտոնից և նրա համար գործել են այլ իրավական հիմքեր և եթե 2010թ-ին հարուցված գործի քննությունը ավարտվեր 4 տարվա ընթացքում՝ 2014թվականին, ապա նոտարական պալատը կկարողանար այսօր հատուցել նոտարի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով պատճառված վնասները:

2. 30.10.2014թ. ՀՀ կառավարության ներկայացուցիչ Դանիել Մխեյանը վերաքննիչ բողոք է ներկայացնում ՀՀ վերաքննիչ վարչական դատարան, նշելով այն մասին, որ Պատասխանողը այլևս չի հանդիսանում նոտար և առկա է պատշաճ պատասխանողի խնդիր:

3. 10.12.2014թ. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից բողոքը մերժվում է: 27.01.2016թ. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվում է:

4. ՀՀ Վարչական դատարանը վարչական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի ստանում է 15.03.2016թ.-ին և դատական նիստ է նշանակում 21.06.2016թ.-ին, այնուհետև՝ 19.10.2016թ.-ին, 19.01.2017թ.-ին, 13.02.2017թ.-ին, 17.05.2017թ.-ին, 19.10.2017թ.-ին, 09.11.2017թ.-ին, 29.11.2017թ.-ին, 18.01.2018թ.-ին, 22.02.2018թ.-ին, 26.07.2018թ.-ին, 24.01.2019թ.-ին, 25.04.2019թ.-ին, 22.10.2019թ.-ին, 10.02.20թ, 02.03.20թ:

Այդպիսով, սույն դատական գործը քննվել է գրեթե 10 տարի, նշանակվել է ընդհանուր 31 դատական նիստ: Ընդհանուր առմամբ միջինում դատական նիստերը նշանակվել են 4-5 ամիսը մեկ անգամ:

**Գ ո ր ծ ի ք ն ն ու թ յ ա ն ո ղ ջ ամ ի տ ժ ամ կ ե տ ն ե ր ի խ ախ տ մ ա ն հ ե տ ն ա ն ք ո վ փ ո խ վ ե լ ե ն ն ա ն օ ր ե ն ս դ ր ա կ ա ն կ ա ր գ ա վ ո ր ու մ ն ե ր ը , ո ր ո ն ց ա ր դ յ ու ն ք ու մ Յ ա յ ց վ ո ր ը ո չ ի ր մ ե ղ ք ո վ , չ ի ս տ ա ց ե լ ի ր պ ա հ ա ն ջ ի ամ ք ո ղ ջ ա կ ա ն ք ա վ ա ր ա ր ու մ , մ ի ն չ դ ե ո հ ա կ առ ա կ պ ա ր ա գ ա յ ու մ ա յ ն հ ն ա ր ա վ ո ր կ լ ի ն ե ր**

Ս ու յ ն գ ո ր ծ ը ք ն ն վ ե լ է 10 տ ա ր ի ժ ամ կ ե տ ու մ , ո ր ի ը ն թ ա ց ք ու մ փ ո խ վ ե լ է ն ե ր պ ե տ ա կ ա ն օ ր ե ն ս դ ր ու թ յ ու ն ը , վ ա ր չ ա կ ա ն դ ա տ ա վ ա ր ու թ յ ա ն օ ր ե ն ս գ ի ր ք ը և Ն ո տ ա ր ի ա տ ի մ ա ս ի ն Յ Յ օ ր ե ն ք ը , ա ր դ յ ու ն ք ու մ ի ր ա վ ա կ ա ն պ ա շ տ պ ա ն ու թ յ ու ն հ ա յ ց ո ղ ա ն ձ ը չ ի կ ա ր ո ղ ա ց ե լ հ ա ս ն ե լ ի ր պ ա հ ա ն ջ ի ամ ք ո ղ ջ ա կ ա ն ք ա վ ա ր ա ր մ ա ն , օ ր ե ն ս դ ր ա կ ա ն փ ո փ ո խ մ ամ ք պ ա հ ա ն ջ ի հ ե տ ն ա ն ք ն ե ր կ ի ր առ ե լ ու հ ա ր ց ու մ :

Դատարանն ի գիտություն է ընդունում, որ անկախ հայ ցվորի պահանջից, «ՀՀ վարչական դատավարություն օրենսգրքի» 221-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ, նոտարական գործողության իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով ներկայացված հայցը բավարարելու դեպքում դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում նոտարական գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու, ինչպես նաև դրա հետևանքները վերացնելու վերաբերյալ, սակայն նախորդիվ նշված հանգամանքի ուժով նոտարական գործողության հետևանքը վերացնելի նարավոր չէ: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում հնարավոր չէ վերացնել նոտարական գործողության հետևանքը, իսկ հայ ցվորի իրավունքները կարող են վերականգնվել «ՀՀ վարչական դատավարություն օրենսգրքի» 220-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համաձայն՝ անձը նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ պահանջ կարող է ներկայացնել նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարման մերժման իրավաչափությունը վիճարկելու պահանջի հետ միաժամանակ կամ երեք տարվար նթագքում այն օրվանից հետո, երբ սույն օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասի համաձայն կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ:

Այսպիսով, Դատարանը եզրակացնում է, որ Էմմա Բազոյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը ենթակա է մերժման, իսկ **նոտարական գործողության կատարման հետևանքները վերացնելու իրավական հնարավորությունը սույն գործով բացակայում է:** Այսպիսով, Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման մասնակի:»:

Ինչ վերաբերում է ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրակատարված՝ ք.Երևան, Պարոնյան փողոց, 12 ենթթիվ 37 բնակարանի նկատմամբ Էմմա Բազոյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջին, ապա Դատարանը գտնում է, որ այդ մասով հայցը հնարավոր չէ բավարարել:

**Գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման վրա ազդել են նաև դատավարության ոչ պատշաճ կողմերի ներգրավումը դատարանի կողմից գործի քննությանը**

- 19.01.2017թ դատարանի նախաձեռնությամբ երրորդ անձ է ներգրավվել Չարուհի Շեկունցը

- 17.05.2017թ դատարանի նախաձեռնությամբ երրորդ անձեն ներգրավել Անգելիսա Յակոբյանը, Մարիա Յակոբյանը, Լիպարիտ Յակոբյանը, Լիանա Դավիդյանը, «Չարգացման Յայկական Բանկ» ԲԲ ընկերությունը և «Արարատբանկ» ԲԲ ընկերությունը
- 25.04.2019թ երկրորդ պատասխանող ներգրավելու կապակցությամբ գործի քննությունը վերսկսվել է նախապատրաստական փուլից:

Ստացվում է, որ գործի քննությունը նթացքում **2017-2019թթ-ը, միայն երկու տարի**, դատարանը իր նախաձեռնությամբ ներգրավվել է դատավարության տարբեր կողմեր՝ երրորդ անձիք, մինչդեռ այդ նույն երրորդ անձանց մասով հստակ դատական ակտով արձանագրել է, որ անհնար է այդ երրորդ անձանց կողմից կնքված գործարքներն ու պետական գրանցումներն անվավեր ճանաչել, քանի որ բոլորը կորցրել են իրավաբանական ուժը օրենքի կարգավորմամբ, մեջբերում՝

«Դատարանն արձանագրում է, որ Էմմա Բազոյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումից հետո խնդրո առարկա գույքի նկատմամբ կատարվել են բազմաթիվ այլ գործարքներ, որոնց արդյունքում այն օտարվել է այլ անձանց, հետևաբար, Դատարանը գտնում է, որ նախորդ բոլոր պետական գրանցումները կորցրել են իրավաբանական ուժը, քանի որ փոխարինվել են այլ գրանցումներով, այսինքն՝ այլ վարչական ակտերով:

Դատարանի նման դիրքորոշումը բխում է «Վարչարարության հիմունքները և վարչական վարույթի մասին» ՅՅ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունից, որի համաձայն. «Անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով»:

Նշված իրավանորմի ուժով սույն գործով վիճելի Էմմա Բազոյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ Չարուհի Շեկունցի անվամբ 06.04.2006թ. -ին կատարված հաջորդ գրանցման փաստով, կորցրել է իրավաբանական ուժը, հետևաբար, այն հնարավոր է անվավեր ճանաչել»:

Դատարանի համար ի սկզբանե հայտնի են եղել օրենսդրական կարգավորումները, ուստի ներգրավվել անձանց, որպես դատավարության մասնակից, սակայն հետագայում արձանագրել, որ վերջիններս սկզբից վերաբերյալ պետական գրանցումներն, գործարքներն անհնար է անվավեր ճանաչել, սա ինքնին **դատարանի կողմից դատական և իրավական պաշտպանությունն հայցող անձի ռեսուրսներին չնպատակային օգտագործումն է:**

Ընդ որում պետք է փաստել, որ թե իրավահարաբերության պահին գործող<sup>4</sup>, այդ թվում ներկայիս օրենսդրական կարգավորմամբ<sup>5</sup> երրորդ անձանց դատարանը ներգրավում է այն դեպքում, եթե դատական ակտը անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է նաև որոշ ակի անձանց վրա:

Երրորդ անձանց ներգրավմամբ, վերջիններս օգտվելով իրենց դատավարական իրավունքներից գործի քննության ընթացքում դատական նիստեր են հետաձգել փաստաբան ունենալու, դատավարության մյուս մասնակիցների կողմից ներկայացված դատավարական փաստաթղթերը ծանոթանալու, դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու համար, ինչն արդեն ինքնին ակամաբերում է դատական նիստերի հետաձգման, մինչդեռ դատարանը դատական ակտով արձանագրելով վերջիններիս վերաբերյալ վարչական ակտերի ուժը կորցրած լինելու, այդ մասով հայցի բավարարելն անհնար լինելու մասին:

**Սույն գործով շուրջ երկու տարի՝ 30.10.2010թ-27.01.2016թ քննվել է միայն յն հարցը, թե ազատված նոտարի դեպքում, ով պետք է որպես իրավահաջորդ հանդես գա դատարանում, ՀՀ նոտարական պալատը, թե ՀՀ-ը, որի հանգուցալուծումն վճռաբեկ դատարանը տալիս է դեռևս 27.01.2016թ-ին, որից հետո վարչական դատարանը ուղղակիորեն պետք է ներգրավվեր ՀՀ նոտարական պալատին որպես պատասխանող, սակայն 25.04.2019թ միայն Հայ ցվորի միջնորդության արդյունքում դատարանը ՀՀ նոտարական պալատին ներգրավում է որպես երկրորդ պատասխանող.**

Դատարանի կողմից կայացված վճռից հետո իրականացված գործողություններ, որոնք փաստում են, որ նույնիսկ բարենպաստ դատական ակտով հնարավոր չի եղել վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը՝ այն է ժառանգական անշարժ գույքը, ինչպես նաև գույքի բացակայության դեպքում պատճառված վնասը

1. 28.04.2020թ Դիմումատուի միջնորդությամբ դատարանի կողմից տրվել է կատարողական թերթ, ներկայացվել է կատարման, սակայն վճիռը փաստացի դեռևս չի կատարվել ԴԱՀԿ կողմից:
2. 31.05.2020թ. Դիմումատուն դիմում է ներկայացվել ՀՀ նոտարական պալատի ղեկավարին՝ նոտարի ոչ իրավաչափ

<sup>4</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք 16-րդ հոդված /ՀՕ-269-Ն/  
<sup>5</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք 19-րդ հոդված /ՀՕ-139-Ն/

գործողություններին հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ :

3. 08.06.2020թ ՅՅ նոտարական պալատի ղեկավարի կողմից ստացվել է դիմումին պատասխան, որով մերժվել է դիմումատուի պահանջը :
4. 01.06.2020թ. դիմում է ներկայացվել արդարադատության նախարարին՝ նոտարի ոչ իրավաչափ գործողություններին հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ, մասնավորապես խնդրելով 1.Յարուցել վարչական վարույթ և Դիմող Յռիփսիմե Ղալաչյանին տրամադրել նոտարական գործողության հետևանքով պատճառված վնասի հատուցում՝ 9000000 (ինն միլիոն) ՅՅ դրամի չափով և ՅՅ սահմանադրության 50-րդ հոդվածի ու ժողովրդականացնել լսումներ՝ ապահովելով լսված լինելու իրավունքի իրացումը :
5. 27.07.2020թ ՅՅ Արդարադատության նախարարի կողմից կայացվել է թիվ 77 Որոշումը՝ Դիմումատուի դիմումը մերժելու վերաբերյալ :
6. 27.08.2020թ Յայցվորը իր ներկայացուցչների միջոցով բողոքարկել է ՅՅ Արդարադատության նախարարի կողմից կայացված թիվ 77 Որոշումը :
7. 27.08.2020թ վերադաս բողոքով Դիմումատուին խնդրել է վերացնել 27.07.2020թ թիվ 77 Որոշումը և ընդունել բարենպաստ վարչական ակտ՝ իրեն տրամադրել նոտարական գործողության հետևանքով պատճառված վնասի հատուցում՝ փորձագետի կողմից որոշված ժամանակակից գնի գնի կեսի չափով :
8. 28.09.2020թ-ին ՅՅ Արդարադատության նախարարի կողմից կայացվել է թիվ 97 Որոշումը՝ դիմումը մերժելու մասին :
9. 11.11.2020թ Դիմումատուին ընդդեմ Արդարադատության նախարարության հայցադիմում է ներկայացրել ՅՅ վարչական դատարան՝ խնդրելով դատարանից Պարտավորեցնել ՅՅ արդարադատության նախարարությանը ընդունել բարենպաստ վարչական ակտ՝ այն է Յռիփսիմե Սարգսի Ղալաչյանին տրամադրել թիվ ՎԴ/4272/05/10 դատական գործով նոտարական գործողության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ՝ ինը միլիոն ՅՅ դրամի չափով :
10. 17.11.2020թ վարչական դատարանը հայցադիմումը ընդունել է վարույթ ՎԴ/9268/05/20 և նշանակել դատական նիստ 30.03.2021թ վականին :
11. 22.09.2020թ. Դիմումատուին դիմում է ներկայացրել նաև կառավարությանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝

ողջամիտ ժամկետում արդարադատություն չստանալու հետևանքով պատճառված վնասի հատուցման գործով, որն ընթացիկ փուլում է՝ դեռևս որևէ պատասխան գրություն չի ստացվել Դիմումատուի կողմից:

12. Դեռևս ընթացիկ փուլում է նաև Հռիփսիմե Ղալաչյանի դիմումի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը նշված պահանջով՝ «Դատական օրենսգրք սահմանադրական օրենքի» 9-րդ հոդվածը, այնքանով, որքանով ողջամիտ ժամկետում գործի քննության կամ եզրափակիչ դատական ակտի կատարման իրավունքը խախտելու դեպքում շահագրգիռ անձանց կողմից իրավունքի պաշտպանության միջոց չնախատեսելու մասով ճանչել ՀՀ սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր»: